նաց (1534) բազում գովութեամբ խօսին զմանէ Յոյնք, բայց խառնեալ 'ի նմա ստութիւն, որպէս այս թէ՝ նորոգեաց Գերմանոս զգերեզմանն Քրիստոսի և զկապար մեծի գմբեթին, բայց յայտնի երևի 'ի դատաստանական գրի թէ՝ Լատինք արարին զայն։ Եւ 'ի ժամանակի սորա պատահեցաւ երկրաշարժ յԵրուսաղէմ, և վնասեցաւ զանգակատունն առ դրան Ս. Յարութեան, և ոմանք 'ի քարանց անկեալ ելին 'ի վերայ գմբեթի տաճարին և վնասեալ զայն, և աշտարակն մնաց աւերակ մինչեւ ցայսօր։ Նոյնպէս եւ զանգակատունն Բեթղեհէմի։ Արդ՝ զանգակատունն Ս. Յարութեան աւերեաց Սալահատտին։ Թէպէտ զկնի ժամանակաց կամեցան Յոյնք նորոգել զայն, այլ չեղեւ հրաման, որպէս ունիմք գրել յիւրում տեղւոջ։ Իսկ զանգակատունն Բեթղեհէմի, զկնի ժամանակաց Յոյնք փոխեցին զայն 'ի սենեակ, և այժմ խառնեալ է ընդ շինուածս վանաց։

Գրէ Տոսիթիոս Պատրիարքն Յունաց 'ի պատմութեան Երուսաղէմի թէ՝ եկեղեցին Բեթղեհէմի էր 'ի ձեռս Յունաց, և յաւուր Ճրագալուցի Զատկին եկին ամենայն մեաբանք տեղւոյն յԵրուսաղէմ տեսանել զկանդէլս լուսաւորութեան, և թողին անդ զլուսարարն միայն, եւ նորա եւս ցանկացեալ գնալ յԵրուսաղէմ, յանձն արար զբանալիս եկեղեցւոյն մինում 'ի կրօնաւորացն Լատինաց, պատուիրեալ նմա յարդարել զկանթեղուսն այրին, և յաւուրն երկրորդի իբրեւ դարձաւ 'ի տեղի իւր 'ի Բեթղեհէմ՝ և խնդրեաց 'ի նմանէ զբանալիս եկեղեցւոյն, նա ոչ կամեցաւ տալ։ Լուեալ զայս Յունաց յԵրուսաղէմ, կոչեցին զլատինս 'ի դատարան։ Սակայն Լատինք՝ ասէ, որացեալ էին յառաջագոյն 'ի կողմն իւրեանց զդատաւորն, և այսպիսի եղանակաւ տիրեցին եկեղեցւոյն Բեթղեհէմի։